

ՏԵՐՄԻՆ-ԷՊՈՆԻՄՆԵՐԻ ԼԵԶՎԱԾԱՆԱԶՈՂԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՐՊՈՐ  
ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐՈՒՄ  
Օհանյան Մ. Մ.

Էպոնիմները հատուկ անունների հիման վրա կազմված տերմինաբանական միավորներ են, որոնք իրենցից ներկայացնում են մի առանձնահատուկ բառաշերտ, որոնց հիման վրա ծագում են վառ, ճանաչողական ընկալումներ, որոնք էլ արտացոլում են աշխարհի էթնիկական պատկերի յուրահատկություններ:

**Բանալի բառեր.** գործառական ոճագիտություն, գիտական ոճ, խոսույթ, բժշկագիտական խոսույթ, ճանաչողական ընկալումներ:

**Նախաբան:** Բժշկական գիտության զարգացումն իր հետ բերում է նոր անվանումների սրընթաց աճ: Այս առումով առավել հետաքրքրական են էպոնիմները: Հատուկ անունների հիման վրա կազմված տերմինաբանական միավորներն իրենցից ներկայացնում են մի առանձնահատուկ բառաշերտ: Հատուկ անունները ոչ միայն մասնակցում են աշխարհի ազգային-լեզվական պատկերի ստեղծմանը, այլև տարբեր լեզուներում կազմում են յուրահատուկ զուգորդումներ, ինչը բացատրվում է ժողովուրդների ավանդույթների և մշակույթների տարբերություններով: Էպոնիմները բառապաշարային միավորներ են, որոնք լրացնում են լեզվում որոշակի իմաստաբանական բացթողումները, նրանց հիման վրա ծագում են վառ, ազգային գործոնով պայմանավորված ճանաչողական ընկալումներ, որոնք արտացոլում են աշխարհի էթնիկական պատկերի յուրահատկությունները (Рылов 2006:298): Քանի որ բժշկագիտությունը մարդկային գործունեության հնագույն ոլորտներից է, հետևաբար բժշկագիտական տերմինաբանությունը շարունակաբար զարգացող գիտության ոլորտ է: Բժշկա-քիմիական, բժշկա-կենսաբանական, բժշկա-տեխնիկական գիտելիքների ինտենսիվ զարգացման հետ կապված՝ բժշկագիտական

տերմինաբանության ընդգրկումը մեծանում է, և բացի այն, որ առաջանում են նոր գիտական հասկացություններ և տերմիններ, առավել հին տերմինները սկսում են կրել որոշակի փոփոխություններ: Հենց այս պատճառով էլ մեր ուսումնասիրության մեջ հատուկ ուշադրության ենք արժանացրել անգլերենի հատուկ անունների հիման վրա կազմավորված բժշկական տերմինաբանական միավորները: Փորձել ենք բացահայտել տերմին-անունների ճանաչողական արժեքը՝ դիտարկելով անվանումների հիմնավորումները, փաստարկները, տերմինի կիրառումը և այլն: Քննության ենք առել նաև տերմինաբանական միավորների բառային-իմաստաբանական առանձնահատկությունները, տերմինի բաղադրիչների փոփոխությունները ժամանակի ընթացքում, հունալատինական տերմինակազմական տարրերի՝ բժշկական լեզվին բնորոշ իմաստաբանական յուրահատկությունները: Անգլերենի բժշկագիտական տերմինաբանական բառապաշարի նշված բառաշերտի քիչ ուսումնասիրված լինելն էլ էական ու արդիական են դառնում առաջարդվող հարցերի ուսումնասիրության համար: Աշխարհում գոյություն ունեն գիտական դպրոցներ, որոնց հատուկ է պատմականորեն առաջացած այս կամ այն՝ երբեմն քիչ տարածված տերմինների օգտագործումը: Դա կարող է պատճառ դառնալ, որ բժիշկը շատ ժամանակ տրամադրի պարզելու համար անվանական տերմինների նշանակությունը: Այդ իսկ պատճառով ստեղծվում են մասնագիտական տեղեկագրեր, որոնք պարզաբանումներ և բացատրություններ են տալիս օրգանիզմների մորֆոլոգիայի՝ ձևի և կառուցվածքի, հիվանդությունների անունների, ախտանիշների և համաախտանիշների մասին՝ արտահայտված տերմին-էպոնիմ անվանումների միջոցով: Բժշկագիտական բառապաշարի տերմին-էպոնիմների շերտը թույլ է տալիս համապատասխան տերմինաբանության կիրառման միջոցով փոխանցել անհրաժեշտ տեղեկատվություն՝ իրականացնելով մասնագիտական հաղորդակցում:

Երրորդ հազարամյակի սկզբի գիտական գրականության մեջ էական նշանակություն է ձեռք բերում տերմինաբանական և ճանաչողության մերձեցմանն առնչվող խնդիրների քննությունը, ինչը թույլ է տալիս վերանայել ավանդական տերմինաբանության բազմաթիվ դրույթներ: Ըստ ճանաչողական տերմինաբանությամբ զբաղվող մասնագետների՝ տերմինները ոչ քարացած, շարժունակ միավորներ են, որոնք ծագում են մասնագիտական խոսքային տարատեսակներում և

ենթարկվում են փոփոխության անվանակարգման գործընթացում՝ վերընթաց զարգացումների արդյունքում (Бейсенова 2009,15): Մարդկային գործունեության անվանակարգման գործընթացների օրինաչափությունները, ներառյալ ինչպես լեզվական, այնպես էլ արտալեզվական տերմինաբանական բնութագրերը, վերլուծության են ենթարկվել ճանաչողական տերմինաբանության դիրքերից, և ինչպես կարծում է ակադեմիկոս Վ. Մ. Լեյչիկը, ճանաչողական տերմինաբանությունը XX—XXI դարերի սահմանագլխի տերմինաբանության զարգացման հինգերորդ փուլն է (Лейчик 2007, 124):

Մարդկային մտածողության զարգացական բնույթը, հայացքների փոփոխականությունը, գոյություն ունեցող տեսակետների վերանայումը, գործընթացների խորքային ըմբռնումը և, համապատասխանաբար, ուսումնասիրման նոր եղանակների, տեխնոլոգիաների և սարքավորումների օգտագործումը՝ արտացոլված անվանակարգման լեզվական միջոցներում, երաշխիքներ են ապահովում գիտության լճացման և պահպանողականության դեմ: Ե. Վ. Բեկիշևան գտնում է, որ մասնագետի կողմից մասնագիտական տերմինաբանությանը տիրապետելը, գիտական հասկացությունները մասնագիտական խոսքում նշելուն ծառայող լեզվական նշաններ ստեղծելը, կառուցելը և դրանք մեկնաբանելու և կիրառելու ունակությունը դրսևորվում է առանձին ճանաչողական համակարգի սահմաններում, որի շրջանակներում էլ իրականացվում են գիտական տեղեկատվության փոխանցումը և պահպանումը (Бекешева 2007):

Դիմառնական բժշկագիտական տերմինները կրում են հայտնի գրողների, փիլիսոփաների, նկարիչների և շատ այլ բնագավառների ականառու ներկայացուցիչների անուններ, որոնք հետագոտել են տվյալ նյութը, հրատարակումներ ունեն դրա վերաբերյալ կամ պարզապես առաջինն են նկարագրել հիվանդության ախտանիշները:

Breech presentation may be diagnosed by **Leopold's maneuver**, vaginal examination, or ultrasound. The point of reference in describing the position of the breech is the sacrum.

The impeding factor of most shoulder dystocias is the impaction of the anterior shoulder beneath the symphysis pubis. Many shoulder dystocias will resolve with the **McRoberts maneuver**, which consists of flexing the thigh at the hips and pulling them to the maternal abdomen.

Տեղեկատվության կուտակումը, պահպանումը և հաղորդումը, որոնք նպաստում են այս կամ այն ճյուղի զարգացմանը, նրա

փոխազդեցությանը այլ ճյուղերի հետ, միջազգային փոխանակմանը, իրականացվում են տվյալ բնագավառին բնորոշ տերմինների օգնությամբ: Վերջին ժամանակներում՝ գիտության տարբեր բնագավառներում անշեղ և արագընթաց զարգացումների պայմաններում, երբ անհրաժեշտություն է առաջացել տերմինաբանական բառաշերտը համալրել, կտրուկ բարձրացել է ժամանակակից գիտության և տեխնոլոգիական գործընթացների բնագավառում նվաճումների անվանակարգման պահանջը: Բժշկության մասնագիտական հասկացությունների ոլորտի սահմաններում ստեղծվում են նոր հասկացություններ: Առաջանում է տերմինաստեղծման և տերմինակազմության կարիք՝ նշված գործընթացը կառավարելու և կարգավորելու համար: Առաջանում է անհրաժեշտություն ուսումնասիրելու հարցին առնչվող լեզվաբանական և ճանաչողական խնդիրներ:

Ե. Վ. Բեկիշևան նկարագրում է դիմառնական տերմիններն իբրև անձի տեսակի արտացոլում կլինիկական տերմինաբանության մեջ՝ ընդգծելով տերմին-անունները, որոնք կազմավորվում են հատուկ անվան մասնակցությամբ՝ հասարակ անվան կողքին (Бекешева 2007,26): Ասվածը կարելի է բացատրել մեր հետազոտության փաստական նյութի վրա.

- **Asherman syndrome**- A syndrome of intrauterine adhesions and synechiae resulting from trauma, commonly currettage./, **Ballantyne's Syndrome (Ballantyne-Runge syndrome)**- Dysmaturity syndrome, placental dysfunction syndrome, postmaturity syndrome, prenatal dystrophy syndrome, prolonged gestation syndrome. **Bandl's ring** - The ring muscle at the border of the uterus corpus and the uterus isthmus, which is developed more pronouncedly during delivery./

Տվյալ դեպքում հատուկ անունները՝ Աշերման, Բելլնտայն, Բենդլ, համակցված են համախտանիշ /2/ և օղակ հասարակ գոյականների հետ՝ ապահովելով երևույթի առավել հասկանալի ընկալմանը: Ըստ էության՝ տերմին-էպոնիմները ձեռք են բերում ճանաչողական արժեք, քանի որ ուղղակիորեն մատնանշում են, թե որ բնագավառի մասին է խոսքը:

Դասական տերմին-անունների կողքին, որոնք կիրառություն են գտել XVI-XIX դարերում, հայտնվում են նոր տերմիններ, որոնք արտացոլում են ինչպես բժշկագիտության նոր բնագավառների զարգացման փուլերը, այնպես էլ այս կամ այն գիտնականի, երկրի նոր փաստերի հայտնաբերման առաջնայնությունը: Կլինիկական

Էպոնիմների խնդիրը միայն պատմաբժշկագիտական չի համարվում, թեպետ դժվար է պատկերացնել կլինիկական մտածողության ախտորոշման և ընդհանրապես բժշկության առաջընթացը՝ առանց բժշկագիտական էպոնիմիկ տերմինաբանության իմացության, որը բնորոշ է տվյալ ժամանակաշրջանին: Լեզվաբանները նշում են, որ զարգացման նախորդ փուլերում էպոնիմների հազվադեպ կիրառությունը գիտական գրականության մեջ բժշկագիտական առօրյա պրակտիկայում պայմանավորված է եղել ոչ թե նրա նկատմամբ նվազ հետաքրքրությամբ, այլ նախ և առաջ դրանց թերիմացությամբ: Հարկ է նշել, որ տերմին-էպոնիմների նկատմամբ բացասական վերաբերմունքի պատճառը տերմինաբանական միավորների իմաստաբանական հիմնավորվածության ոչ լիարժեքությունն է եղել, որը տվյալ բնագավառի մասնագետների կողմից բացատրվում է նրանց կազմի մեջ մտնող հատուկ անունների անիմաստությամբ, ինչպես օրինակ Հոլջիի կոմպլեքսը /բարդույթը/, Սթոքսի օրենքը, Սուխարևայի երրորդությունը: Վերջին տարիների աշխատանքները, ինչպես նաև մասնագիտական լեզվի ուսուցման պրակտիկան, համոզում են, որ տերմին-անունները զգալի չափով նպաստում են բժշկագիտական խոսքի ճիշտ ընկալմանը և հեշտացնում են մասնագիտական շփումը, քանի որ ունեն միջազգային բնույթ՝ նույնական կադապարում և նշանակություն տարբեր լեզուներում (Կոուլ-Կոուլի դիագրամը, Սյուսեի ախտանշանը): Այն, որ հարցն այսօր ձեռք է բերել էական նշանակություն, վկայում է տերմինաբանության ոլորտում կատարված աշխատանքների քանակը /Блейхер В. М., Завилянская Л. И., Ёнчев В., Магилини Г./:

Տարբեր ախտանշաններ, ախտանիշների համակցություն և հիվանդություն նշանակող բժշկական տերմինների մեջ մեծ տեղ են զբաղեցնում անվանական կլինիկական տերմինները, որտեղ արտացոլված են գիտնական-բժիշկների անունները, ովքեր առաջին անգամ են դրանք նկարագրել կամ կիրառել բուժման այդ եղանակը (Հիպոկրատի դեմքը, Պիրոգովի գիպսե վիրակապը, Բոտկինի հիվանդություն, Բելսկու ախտանշան, Ֆիլատովի սինդրոմ, Կվինկեի այտուց, Կուռլինի խոց, Կուզնեցով-Պենսկու կար, Սալիի եղանակ, Վիրխովի մետաստազ, Աշոֆֆի լեղապարկ, Ֆալոյի երրորդությունը):

Մեծ խումբ են կազմում կլինիկական տերմին-անունները, որոնք արտացոլում են օրգանի առանձին մասերի, հյուսվածքի, բջջի անվանումները, ուսումնասիրության առավել տարածված եղանակները, կամ լայն ճանաչում գտած գիտական հայտնագործությունները (Գյոթեի

ոսկրը, Հոլքիի բջիջը, Ռուժեի թաղանթը, Շարնեի հյուսվածքը, Պեխլինի գեղձը, Ռյունշի մկանը, Գրուբերի կապանը, ջիլը, Վրիսբերգի աճառը, և այլն): Պետք է նշել, որ անվանական տերմինները հատուկ դեր են խաղում նաև բժիշկների պատրաստման գործում: Այսօր դժվար է գտնել բժշկական բնագավառ, որտեղ այս կամ այն չափով չեն օգտագործվում տերմին-էպոնիմներ, որոնք դիպուկ և ճշգրիտ ներկայացնում են հարցը:

Օրինակների քննարկումից ակնհայտ է դառնում, որ բժշկագիտական խոսքում էպոնիմների կիրառումը կարող է զուգակցվել որոշակի բժշկական հմտությունների, միջամտությունների ու հնարների հետ:

**Smellies' manoeuvre (Mauriceau-Levret manipulation)** -այս մեթոդը ցույց է տալիս պտղի հետույքային դիրքը և նույն դիրքով ծննդաբերությունը, որտեղ բժշկի դերը չափազանց մեծ է պտղի դիրքի հետ կապված:

**Zavanelli's maneuver** –մանկաբարձական միջամտություն է, երբ նորածնի գլուխը հայտնվելուց հետո ուսերը ֆիքսվում են, և ծննդաբերությունը դառնում է արդեն կյանքին սպառնացող թե՛ նորածնի և թե՛ մոր համար:

**Sim's position** (James Marion Sims)- քարահեռացման դիրք է, որը հեշտացնում է հեշտոցային քնությունը: Այս դիրքը իր անվանումը ստացել է ամերիկացի գինեկոլոգ Ջեյմս Մարիոն Սիմսի անունով: Նա համարվում է ամերիկյան գինեկոլոգիայի նախակարապետը:

Recognized complications of vaginal breech delivery include entrapment of the fetal head, spinal cord injury secondary to hyperextension of the fetal head, brachial plexus injury, lower **Apgar scores**, prolapsed of the umbilical cord, asphyxia, intracranial hemorrhage, and trauma to internal organs.

Վերոհիշյալ օրինակում էպոնիմի կիրառումը որոշում է ծննդաբերությունից հետո նորածնի ֆիզիկական վիճակը. այս չափման միավորը իր անունը ստացել է նյույորքցի անեսթեզիոլոգ Վիրջինիա Աբգարի անունով:

Այդ անուններում կուտակված են աշխարհի տարբեր երկրների գիտնականների և բժիշկների ջանքերը՝ հասկանալու մարդկային մարմնի օրգանների կառուցվածքը և գործունեության առանձնահատկությունները և այլն, որի միջոցով հավերժացվել է գիտական գիտելիքի փոխանցումը ժամանակի և տարածության մեջ, առանց որի անհնար է ժամանակակից գիտության բարեհաջող

զարգացումը: Իբրև օրինակ՝ կարող են ծառայել հետևյալ տերմին-էպոնիմները.

**Fallopian tube**- խողովակների գույգ է, որը կապված է արգանդի հետ և հենց այն ուղին է, որտեղով էլ սերմնաբջջին անցնում է դեպի արգանդի հատակ: Այս տերմինն իր անունն ստացել է 16 դարի իտալացի հայտնի բժիշկ և վիրաբույժ Գաբրիել Ֆալոպիոյի անունով:

**Rokitansky-Hauser syndrome /Mayer Rokitansky Kuster-Hauser Syndrome/:** Այս համախտանիշը բնութագրվում է հեշտոցի, դաշտանային ցիկլի բացակայությամբ /6 ամիս և ավելի/, արգանդի թերզարգացածությամբ, իսկ ձվարաններն ու ֆալոպյան ուղիները տեղակայված են որովայնի հետին մասում:

Տերմին-էպոնիմները բժշկական տերմինաբանության մեջ մեծ տոկոս են կազմում: Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում էպոնիմ-հոմանիշները (Բազեդով-Գրևս-Պերրի հիվանդություն - դիֆուզային թունավոր խպիպ, Բոտկինի հիվանդություն - ինֆեկցիոն վիրուսային հեպատիտ և այլն):

Որոշ տերմին-անուններ ունեն մի քանի հոմանիշներ (Բուրնսիլի հիվանդություն-Բուրնսիլ-Ստրիգլի-հիվանդություն-Բուրնսիլ-Բրիտ հիվանդություն - նեյրոմաշկային սինդրոմ Բուրնսիլի տիպի -Բուրնսիլի ֆակոմատոզ - Բուրնսիլ Պելացիի հիվանդություն - տուբերկուլյոզային սկլերոզ): Նրանց թիվը հասնում է որոշ դեպքերում մինչև տասնհինգի:

Նշենք նաև, որ տերմին-էպոնիմներին նույնպես հատուկ են հուզականությունը և արտահայտչականությունը ինչպես դրական, այնպես էլ բացասական առումով (Ալիսան հրաշքների աշխարհում, Վեներայի զարդը, Էլշպիգի մարգարիտները, Սուրբ Վիտտայի պարը, Լինբերգի ամրոցը և այլն):

Վերջին ժամանակներում դիտվում է նաև տերմին-էպոնիմների ներլեզվական փոխանցումներ՝ լեզվի մի շերտից մյուս շերտը (*«Մալգիպիևի ցանց» տերմինը փոխարինվել է «հրաշք ցանց» անվանումով, «Գալլերի եղունգ» տերմինը՝ «թռչնի խթան»* հոմանիշով:

Մեծ է այն անվանական տերմինների տեսակարար կշիռը, որտեղ օգտագործվում են բժիշկների մեկից ավել անուններ (Յակոբսոն-Լասկա-Բեխտերն-Կեմպների ախտանշան, Խենդա-Շյուլեր-Քրիստիան-Լետտերեր-Ջիվեի ախտանշան և ուր.), որոնք միաժամանակ նկարագրել են այդ հիվանդությունները, նշանները, ախտանիշները և համաախտանիշները կամ հայտնաբերել են այդ հիվանդությունը որոշելու եղանակ: Այդ տերմինները բժշկագիտության մեջ նկարագրում

են փոխադարձ կապը, մշտական զարգացումը և փոխանցելիությունը: Անհրաժեշտ է նշել, որ հաճախ միևնույն հեղինակի անունը վերագրվում է երկու և ավելի հիվանդություններին, ախտանշաններին կամ սինդրոմներին, որոնք նա նկարագրել է (հիպոկրատի երդումը, դեմքը, դիմակը, եղունգը, աթոռը և գլխարկը. Պիրոգովի ապոնևրոզը, Պիրոգովի գիպսե վիրակապը, թմրեցումը ըստ Պիրոգովի, ոսկրա-պլաստի վիրահատություն ըստ Պիրոգովի, անդամահատություն ըստ Պիրոգովի և այլն):

**Եզրահանգում:** Բժշկագիտական տերմինաբանությունը մասնագիտական շփման կարևորագույն միջոց է: Ազգային և միջազգային ճանաչողական-մշակութաբանական տեղեկատվությունը, որը կուտակվում է անուններում, դառնում է սոցիալական գիտելիքի աղբյուր, որն անհրաժեշտ է մասնագետների շփման համար:

### ТЕРМИН-ЭПОНИМЫ В МЕДИЦИНСКИХ ТЕКСТАХ: ЛИНГВОКОГНИТИВНЫЙ АСПЕКТ

Оганян М. М.

Эпонимы - это терминологические единицы, основанные на собственных именах, которые представляют собой специфический словарь, основанный на ярких, национально детерминированных когнитивных представлениях, которые отражают особенности этнического образа мира.

**Ключевые слова:** функциональный стиль, научный стиль, дискурс, медицинский дискурс, когнитивные восприятия.

### TERM-EPONYMS IN MEDICAL TEXTS: LINGUOCOGNITIVE PERSPECTIVE

Ohanyan M. M.

Eponyms are terminological units based on proper nouns, which form a specific vocabulary, based on vivid, nationally determined cognitive perceptions that reflect the peculiarities of the world's ethnic image.

**Keywords:** functional stylistics, scientific style, discourse, medical discourse, cognitive perceptions.



## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Лейчик В. М. Когнитивная лингвистика. // Новые проблемы познания. 2007. Вып. 5. С. 121-126.
2. Рылов Ю. А. Имена собственные в европейских языках. // Ю. А. Рылов. М. АСТ: Восток, Запад. 2006. 311 с.
3. Бейсенова Ж. С. Отраслевая терминология: типология, классификация, функционирование: автореф. дис. .д-ра фил.наук / Ж. С. Бейсенова; Республика Казахстан, Астана: КГУ, 2009. 42 с.
4. Бекишева Е. В. Формы языковой репрезентации гносеологических категорий в клинической терминологии. Автореф. дис. докт. фил. наук / Е. В. Бекишева. М. Инст. языкознания РАН. 2007. 52 с.  
[http://www.referun.com/n/formy\\_yazykovoy\\_reprezentatsii\\_gnoseologicheskikh-kategoriy- v\\_klinicheskoy-terminologii](http://www.referun.com/n/formy_yazykovoy_reprezentatsii_gnoseologicheskikh-kategoriy-v_klinicheskoy-terminologii).
5. Keneth R. Niswander, Arthur T. Evans Manual of Obstetrics. 1983 5<sup>th</sup> edition. USA. Little Brown and Company, Massachusetts, 538p.
6. [http://www.bsmu.by/index.php?option=com\\_content&view=article&id=3213:2026-05-17-02-21-04&catid=159:42004&Itemid=52](http://www.bsmu.by/index.php?option=com_content&view=article&id=3213:2026-05-17-02-21-04&catid=159:42004&Itemid=52)

### **Տեղեկություններ հեղինակի մասին**

*Օհանյան Մ. Մ. – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ*

*Երևանի պետական համալսարան*

*Էլ. փոստ՝ [ohanyanmarianna@gmail.com](mailto:ohanyanmarianna@gmail.com)*

*Տրվել է խմբագրություն 17.10.2019*